ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ 2019Թ. ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2019 թ.-ի **առաջին** նիստը տեղի է ունեցել 29.03.2019 թ.-ին: Խորհրդի 36 անդամից նիստին մասնակցել է 18-ը, ևս՝ 7 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

«Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ նախագծի ներկայացում /զեկուցող՝ ՀՀ կրթության և գիտության նախարարության հանրակրթության վարչության նախադպրոցական և միջնակարգ կրթության քաղաքականության մշակման և վերլուծության բաժնի պետ Սյուզաննա Մակյան/:

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. Հավանության արժանացնել «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենքի՝ նոր խմբագրությամբ նախագիծը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի 2019 թ.-ի **երկրորդ** նիստը տեղի է ունեցել 27.06.2019 թ.-ին: Խորհրդի 36 անդամից նիստին մասնակցել է 18-ը, ևս՝ 4 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

Կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդում. գործատուների մասնակցությունը ՄԿՈ-ների գործընթացին /զեկուցող՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և

սպորտի նախարարության նախնական/արհեստագործական և միջին մասնագիտական կրթության վարչության պետ՝ Արտակ Աղբալյան/:

Նիստի ընթացքում ընդունվել է որոշում.

1. Ընդունել ի գիտություն զեկույցը:
2. ՄԿՈՒ ոլորտի բարեփոխումների հիմնական ուղղություններին հավանություն տալու մասին:

ՀՀ ԿԳ նախարարին կից հասարակական խորհրդի 2019 թ.-ի **երրորդ** նիստը տեղի է ունեցել 18.12.2018 թ.-ին: Խորհրդի 31 անդամից նիստին մասնակցել է 27-ը, ևս՝ 5 հրավիրյալ անձ:

Նիստի օրակարգ՝

1. 1. ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Արայիկ Հարությանյանի բացման խոսք
2. «Բարձրագույն կրթության և գիտության մասին» ՀՀ օրենքի նախագծի ներկայացում /զեկուցող՝ ԿԳՄՍ նախարարի խորհրդական Սամվել Կարաբեկյան/
3. Հարց ու պատասխան
4. Ելույթներ /մինչև 3 րոպե/

ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի աշխատակարգի համաձայն՝ խորհրդի նիստերը պետք է անցկացվեն առնվազն եռամսյակը մեկ: 2019 թվականի ընթացքում անցկացվել է 3 նիստ. 4-րդ նիստի բացակայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ՀՀ կրթության և գիտության, ՀՀ մշակույթի, ՀՀ սպորտի և երտասարդության հարցերի նախարարությունների միավորման արդյունքում անհրաժեշտություն է առաջացել ձևավորել նոր՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդ:

Այդ նպատակով նախարարի հրամանով հաստատվել է հասարակական խորհրդի նոր աշխատակարգը և 19.09.2019 թվականին հայտարարվել է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍ

նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար: Մրցույթի արդյունքում խորհրդում ընդգրկվել է 12 անդամ:

Քանի որ ըստ խորհրդի աշխատակարգի՝ խորհուրդը պետք է կազմված լինի առնվազն 15 անդամից, հետևաբար խորհրդի համալրման նպատակով 19.11.2019 թվականին հայտարարվել է ևս մեկ մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհրդի կազմում ընդգրկվելու համար: Մրցույթի արդյունքում խորհրդի կազմը համալրվել է ևս 19 անդամով: Այսպիսով՝ խորհրդի կազմը բաղկացած է 31 անդամից: